

ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՐԻՋԻՍԸ ԵՒ ՄԵՐ
Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ն

Ռուսական յեղափոխութիւնը, որ բոլոր տեսակէտների վերագնահատումը պահանջեց՝ մեր առջև էլ լուսացրեց նոր հորիզոններ, մեր մտաւոր հայեացքն էլ ուղղեց դէպի չեղած ճանապարհներ, դէպի անապասելի հնարաւորութիւններ: Թագուն փայփայտած գաղափարները, գաղտագողի սնուած տենչանքներն իրականութիւն դառան և ինչ որ հեռաւոր ապագայի բաժինը պիտի լինէր օրուայ լօզունդ յայտարարուեց: Նոր կարգերն ամուր թէ խախտւտ արմատներ ունին՝ թերևս դա չէ կարևորագոյնը. նշանակալիցն այն է, որ հին իրաւակարգի գլխովին վերադարձն անհնարին լինելով՝ մեր իսկ ձեռքով յարմարութիւն ունինք նորը շինելու, ցանկացածը փորձելու:

Մի կազմակերպութիւն կայ, մի հնագոյն, դարերից աւանդուած համայնք կայ, որի վիճակն էլ պէտք է վերջապէս որոշուի, որի գոյութեան ճշնաժամն այս կամ այն լուծումն է պահանջում: Եւ անակնկալ կերպով հասել է ժամը բարձրաձայն ասելու, առանց կողմնակի նկատումներով զսպուած լինելուն յայտարարելու՝ որ այնպէս ինչպէս որ հիմայ է՝ այլ ևս չի կարող շարունակուել. այն գոյութիւնը որ վերջերս վարել է այդ կազմակերպութիւնը՝ գոյութիւն չէ, այլ դանդաղ բայց աներկբայելի

մահացում: Ճւ քանի խօսքս հայ եկեղեցու մասին է, ամեն մի հաւատացեալ հայ պիտի անկեղծօրէն խոստովանի, որ մեր եկեղեցին գնում է դէպի անդունդ և կանգնած է կորստեան ճանապարհի վրայ: Եթէ ժամանակին ազդու միջոցներ ձեռք չառնուեն, նրա վերջնական անկումը հաւատացած պէտք է լինենք որ շատ մօտալուտ է:

Ոչ Արշակունիների և ոչ էլ Բագրատունիների հարստութիւնները չեն կարողացել իրականացնել այն պատմական անհրաժեշտութիւնը, որի զանցուռումը տակնուվրայ է արել մեր ազգային բախտը. նրանք չեն կարողացել գլուխ բերել մեր հայրենիքի միութիւնը: Եւ այն, ինչ որ ոյժ չի ունեցել անելու մեր մարմնաւոր իշխանութիւնը, արել է մասամբ եկեղեցին: Իրաւ է, նա էլ չի ստեղծել պետական մի ամբողջութիւն, բայց իրականացրել է որչափ կարելի էր, գոնէ հոգևոր միութիւն:

Իարեւր շարունակ եկեղեցին եղել է մեր ամբողջութեան սիմբօլը, երկար դարերի ընթացքում նա եղել է մեր ազգային իդէալի մարմնացումը և նա հեշտացրել է մեր ժողովրդին դարբնել համազգային ոգի: Միշտ շերմօրէն պահապան լինելով իրա պատմական միասնային, հայ եկեղեցին հասցրել է մեզ մինչև XX դար, երբ իրա դերը ազգային—քաղաքական ասպարէզում վերջացած համարելով սկսել է անշուկ և վեհ խոնարհութեամբ աստիճանաբար տեղի տալ նոր ոյժերի, հասարակական ստեղծագործ ալ տարրերի. տեղի տալ առանց պայքարի, ճշմարիտ հայրենասիրութեամբ ու սրտառուչ անձնուիրութեամբ:

Եւ այդ էվօլյուցիան կատարուեց այնքան աննկատելի, այնքան առանց ցաւի, որ, երկու և կէս տարի սրանից առաջ, երբ որ թագաւորին Թիֆլիզում հայկական բոլոր խաւերից մի մեծ պատգամաւորութիւն ներկայացաւ, այդ պատգամաւորութեան մէջ չը կար հոգևորականութեան ոչ մի ներկայացուցիչ և դա ոչ ոքի զարմանալի չը թուաց, ոչ ոք ուշադրութիւն էլ չը դարձրեց, մի բան որ անհնարին էր դեռ մի 5—6 տարի առաջ:

Նման մի հմուտ ու փորձուած կարգադրիչի, որ գիտէ կամքի ոյժով ամենքի ուշադրութիւնը իրա վրայ բեռել ու երբ որ ամեն բան պատրաստ է, համբօրէն հեռանալ՝ մեր եկեղեցին չը սպասեց որ իրան ասեն. «մաւրը արել է իրա գործը, մաւրը կարող է հեռանալ», այլ նոր գործող ոյժեր կրթելով՝ նրանց յանձնեց քաղաքական ասպարէզը ու ինքը մի կողմ քաշուեց, որպէս կողմնակի մի ունկնդիր:

Ուրիշ կերպ էլ ի հարկէ լինել չէր կարող. կդերակահոսութիւն մեր մէջ երբէք ուժեղ կերպով չի արտայայտուել. մի հայեցակէտ, որ պահանջէր եկեղեցու գերիշխանութիւնը մարդկային կեանքի բոլոր արտայայտութիւնների վերայ, մեր մէջ գոյութիւն չի ունեցել: Հայ եկեղեցին այնչափ սերտ կերպով է կապուած ժողովրդի հետ, աշխարհականներն եկեղեցական գործերին այնքան կենդանի և մօտ մասնակցութիւն ունեն, որ կղզիացած, սառած մի կաստա, մեր մէջ չի էլ կարող լինել:

Սակայն ազգային միութեան սրբազան գործը կատարելով, եկեղեցին շեղուել է իրա իսկական ու հարազատ ճանապարհից. ազգային գաղափարին զոհուելով՝ նա մոռացել է որ եկեղեցին հաւատացեալների միութիւն է: Մի կողմից հետամուտ լինելով աշխարհական-քաղաքական գործերին և միւս կողմից էլ իրա մէջ ընդունելով բազմաթիւ կողմնակի (եկեղեցու համար) անձանց, մեր հոգևորականութիւնը անգիտակցօրէն առաջնորդեց եկեղեցին վտանգաւոր ուղիով: Մեզքը, անկասկած, իրանը չէր, դա պատմական անհրաժեշտութիւն էր: Ռուսաստանի և Տաճկաստանի քաղաքական պայմաններն խեղդում էին ամեն մի կենարար ճառագայթ, արգելք էին դնում անկախ մտքի ամեն մի արտայայտութեան, շղթայում էին ինչ-ցիատիւն ու ճնշում բոլոր ազատամիտ տարրերը: Եկեղեցին համեմատաբար ազատ էր այդ ճնշումից: Հայ ժողովուրդը տեսնում էր «աշխարհական» առաջադիմութեան խեղդումը, ենթարկում էր ամեն տեսակ բռնութիւններ:

րի. բայց իբրև կրօնական համայնք՝ կարող էր դալրոցներ ունենալ, և որոշ չափով ներքին ինքնավարութիւն վայելել. միայն թէ այդ բոլորը պէտք է լինէր կրօնի դրօշակի ու կրօնի հովանու տակ: Եւ մեր եկեղեցին ականատես եղաւ մի երևոյթի, որ նրա անկման զօրեղ գործօններից մէկը հանդիսացաւ. բազմաթիւ երիտասարդներ, լաւագոյն դադափարներով տոգորուած, բայց կրօնի վերաբերմամբ անտարբեր երիտասարդներ, բարձր ուսում ստանալով ու իրանց ժողովրդին ծառայել ցանկանալով, հոգևորական կոչում ընդունեցին:

Տեսնելով գործունէութեան մի համեմատաբար ազատ ասպարէզ, նրանք ստիպուած էին երկուսից մէկն ընտրել: Կամ հրաժարուել ժողովուրդին ծառայելուց և կամ եկեղեցու մէջ մտնել, առանց հաւատի ու առանց կրօնական զգացման և շատերն երկրորդ ճանապարհն ընդգրկեցին. ազգը դրանից շահեց, բայց եկեղեցին տուժեց:

Կրօնական զգացմունքը մեր մէջ գնալով աւելի և աւելի նուազեց և հնարաւոր եղան ամեն մի հաւատողի խիղճը խորապէս վիրավորող այնպիսի վրդովեցուցիչ դէպքեր, ինչպէս որ Անդրկովկասեան դիւղերից մէկի եկեղեցու մէջ թատրոնական ներկայացում սարքելը կամ զուտ քաղաքական աղմկալի ու ծեծով վերջացող միտինգներ գումարելը: Խորտակուած կրօնը ոչնչով չը փոխարինուեց. և կրօնական-զգացմունքը կորցրած հայը փոխարէնը ոչինչ չըստացաւ:

Այն բացը, որ կրօնի թուլանալովը գոյացել է հայ մարդկանց գիտակցութեան մէջ, զարհուրելի է ու կործանարար: Ամենուրէք Եւրոպայում և մանաւանդ Ռուսաստանի մէջ տեսնում ենք կրօնական մտքի զեղուն կեանք և անդադար զարգացում: Թէև եկեղեցին, իբրև կազմակերպութիւն, այլ ևս առաջուայ տեղը չի գրաւում, սակայն կրօնական զգացմունքը, որ մարդկային հոգու խորունկ յատկութիւններից մէկն է, ոչ միայն չի մարել, այլ և վերջերս աւելի ևս ամրացել է:

Բացի դրանից Եւրոպական այն խաւերի մէջ, որոնք անտարբեր են դէպի ոչ միայն եկեղեցին այլ և դէպի կրօնը՝ ուժեղ է քաղաքացիական կոչուած խիղճը, որ մեզանում գտնուում է սաղմային դրութեան մէջ: Մեր մէջ կրօնի և եկեղեցու թուլանալը մէկ եղաւ: Նոյնիսկ կարելի է ասել, որ եկեղեցին աւելի երկար ապրեց, քան կրօնը: Մինչդեռ հայ ժողովուրդը, որ ապրում է աննօրմալ մըթնոլորտում և անցնում է ասիական կենցաղից դէպի եւրոպականը, ուրեմն գտնուում է անցողական վիճակի մէջ, առանձնապէս կարիք ունի բարոյական ամուր խարխախի: Այդ խարխախը չքանալու վրայ է: Մի ուրիշ խարխախ, մի այլ բարոյական արգելակ չի գոյացել: Մեր ժողովրդին սպառնում է սարսափելի անկում:

Եկեղեցին, որ մինչև հիմայ հնարաւորութիւն չունէր ամբողջովին նուիրուելու կրօնի ամբապնդելուն և ժողովրդի բարոյական զարգացման, այժմ երբ հնարաւորութիւն ունի՝ պիտի անմիջապէս գործի անցնի: Այլապէս նա գերեզման կը պատրաստի թէ իրա համար, և թէ մահաւանդ հայ ժողովրդի բարոյականութեան համար:

Որպէսզի եկեղեցին վերակենդանանայ, նա պէտք է նախ և առաջ ազատուի այն անհարազատ և հակաբնական բեռից, որ նա ստիպուած է կրել յանուն ազգային գաղափարի: Նա պէտք է թօթափի իրանից այն լուծը, որ նրա համար մահու չափ կորստաբեր է:

Իմ նպատակն է ցաւն յայտնագործել. դարմանը թերևս ուրիշները ինձանից լաւ կիմանան. գուցէ լաւագոյն դեղատոմս առաջարկողներ լինեն: Ուզում եմ միայն ասել որ ես եկեղեցու ազատագրումը օտար տարրերից հնարաւոր եմ գտնում միայն հետևեալ ուղղութեամբ.

Վեհ. Կաթողիկոսին ու եպիսկոպոսներին պիտի կատարեալ հնարաւորութիւն տրուի զբաղուելու միմիայն կրօնական կամ եկեղեցու հետ անմիջական առնչութիւն ունեցող խնդիրներով. նրանք պէտք է լինեն լոկ հոգևոր հովիւներ. քաղաքական, տնտեսական ևայլն գործերը չք պէտք է նրանց խանգարեն իրենց իսկական կոչմանը ծա-

ռայելու: Տնտեսական գործեր և եկեղեցապատկան կալուածներ կառավարելու համար պիտի ստեղծուեն աշխարհականներից կազմուած ծխական և թեմական խորհուրդներ: «Հոգևոր» կոչուած, իսկապէս աշխարհական թեմական դպրոցներն ու ճեմարանը պիտի նուիրուած լինեն բացառապէս մի նպատակի. պատրաստել եկեղեցու համար ուսեալ ու ազնիւ հովիւներ:

Ծխական դպրոցները պէտք է վերածուեն ժողովրդականների ու արուեսն դեմստովօնների ձեռքը:

Եկեղեցիները պէտք է բաց լինեն միայն աղօթքի, միայն Աստուծոյ խօսքը լսելու և լսելի դարձնելու համար:

Եկեղեցին իրա ճանապարհին վերադարձնելու համար անհրաժեշտ է համահայկական (ուրեմն միայն պատերազմից յետոյ) եկեղեցական ժողով, որի նշանաբանը պէտք է լինի. եկեղեցին՝ հաւատացեալների համար:

Բարենորոգուած եկեղեցին կրտայ ժողովրդին հոգևոր սփոփանք և ամուր բարոյական հիմք, ժողովուրդը եկեղեցուն կրտայ այն փրկարար ոյժը, առանց որի ոչ մի եկեղեցի գոյութիւն ունենալ չի կարող՝ հաւատքը:

Յիշենք, որ եթէ եկեղեցին մեզ հարկաւոր է, ապա նրա կեանքը, նրա փառքը, նրա ոյժը միմիայն մեզանից է կախուած:

Ի. Ե. Մի. Թումանեան